ՌՈՒԶԱՆ ԶՈՒԼՖՅԱՆ

ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳՈՒՄ

Գոյականի թվի քերականական կարգի պատմական զարգացման գործընթացում առկա տեղաշարժերն ընթացել են հետեւյալ ուղղություններով. ա) հավաքական գոյականներից եզակի թվին, բ) անեզական գոյականներից եզակի թվին, գ) անհոգնական գոյականներից եզակի-հոգնակի հարաբերակցությանը:

ա) Հավաքական գոյականների թվային իմաստի մասնավորեցումը եզակիի

Հավաքական գոյականները ներկայացնում են միատեսակ առարկաների ամբողջություն, բազմություն, ինչպես՝ գորք. գունդ. մաշտ. դասակ. պաք. ցեղ. նախիր եւ այլն: Սակայն վերոհիշյալ բառերը չունեն քերականական տարբերակիչ հատկանիշներ եւ հոգնակի թիվ են կազմում, ինչպես սովորական գոյականները:

Բուն հավաքականները եզակի ձեւով արտահայտում են հոգնակի իմաստ, սակայն ոչ թե ցույց են տալիս հոգնակիության մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին, ինչպես հոգնակի գոյականները, այլ հոգնակիության մեջ մտնող առարկաները ներկայացվում են որպես մի միասնություն, ամբողջություն, օրինակ՝ ուսանողութիւն. եռիտասարդութիւն. մարդկութիւն. խմորեղեն. ոսկեղեն. տատրնք. պապոնք. Սարուենք. Հակոբենք եւ այլն:

Հր. Աճառյանը հավաքական գոյականները բնութագրում է որպես «իմաստով հոգնակի ու ձեւով եզակի»[1] բառեր, իսկ պրոֆ. Է. Աղայանը հավաքականությունը համարում է թվի կարգի արտահայտություններից մեկը՝ «այսպես կոչված հավաքական թիվ», քանի որ «կան բազմաթիվ բառեր, որոնք արտահայտում են առարկաների քանակը ոչ թե որպես եզակի (մեկ), կամ հոգնակի (մեկից ավելի), այլ որպես մի հավաքական ամբողջություն»[2]:

Ժամանակակից հայոց լեզվում հավաքական գոյականները լինում են պարզ, ինչպես՝ պարս. եռամակ. ջուլակ. եւ ածանցավոր, ընդ որում, հայերենն առանձնացնում է հատուկ հավաքականակերտ ածանցներ.

ա)–ութիւն-ուսանողութիւն. աշակերտութիւն. մարդկութիւն. գյուղացիութիւն.

բ)-եղեն–ոսկեղեն, ամանեղեն, սպիտակեղեն, խմորեղեն, կտորեղեն,

գ) – անի- առականի, նամականի, ավազանի, ընտրանի,

---

[1] Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. III, Ե., 1957, էջ 856:

[2] Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Ե., 1963, էջ 362:

դ) – որայ+ք- ղերորայք, արտորայք.

ե) – տի+ք - փորոտիք, հնոտիք, մանկտիք.

զ) – ենք. – անք. - ոնք. - ունք - Գրիգորենք. Արամենք. Վարդանանք. պապոնք. տատոնք. Վանդունք եւ այլն:

Հավաքանակերտ ածանցները կարելի է խմբավորել երկու կարգերում.

1) Ածանցներ, որոնք ունեն հատուկ հավաքական իմաստ: Սրանք են՝ – ություն. – երեն. – անի. –որայք, – տիք:

Այս ածանցներով կազմված բառերը գիտակցվում են որպես մեկ ամբողջություն, համարժեք են եզակի թվին եւ պահանջում են եզակի թվով արտահայտված ստորոգյալ, օրինակ՝ «Ուսանողությունը շատ է կարդում», «Խմորեղենը համեղ էր», «Այս դեղորայքը նախընտրելի է» եւ այլն:

2) Ածանցներ, որոնք համատեղում են հավաքականության եւ հոգնակիի իմաստները, այսինքն՝ միաժամանակ նշում են եւ առարկաների ամբողջության, հավաքականության, եւ մեկից ավելիի, շատի գաղափար: Այսպիսիք են –ոնք. -ենք. -անք. -ունք վերջածանցները, որոնցով կազմված գոյականները պահանջում են հոգնակի թվով արտահայտված ստորոգյալ, ինչպես՝ «Գրիգորենք մեր հարեւաններն են», «Վարդանանք մեծ հայրենասերներ էին», «Պապոնք տանը չեն» եւ այլն: Նշենք, որ այս կազմություններն ունեն ժողովրդախոսակցական երանգ եւ գրական լեզվին անցել են բարբառներից:

Հավաքական գոյականներն իրենց ձեւով մի դեպքում հարում են անհոգնականներին, այսինքն չունեն համապատասխան հոգնակի ձեւեր, մյուս դեպքում՝ անեզականներին եւ չունեն եզակի ձեւեր: Արդյունքում ունենք եզականածեւ հավաքականներ եւ հոգնակածեւ հավաքականներ:

Եզականածեւ հավաքականների մի մասը -եր, -ներ. հոգնակերտների հավելումով կարող է մտնել եզակի-հոգնակի հարաբերակցության ոլորտ, ինչպես՝ գունդ-գնդեր. ժողովուրդ-ժողովուրդներ. հույր-հույրեր:

Եզականածեւ անհոգնական հավաքականները միաեզր են եւ չեն մտնում եզակի-հոգնակի հարաբերակցության ոլորտ, ինչպես՝ բնակչություն, բանվորություն. հոգեւորականություն եւ այլն:

Հոգնականածեւ հավաքականները նույնպես եզակի-հոգնակի հակադրության մեջ չեն մտնում եւ հոգնակի ձեւում ամփոփում են հավաքականության գաղափարը, ինչպես՝ նոթեր, հուշեր, ցանցուրներ, պապոնք, Վարդանանք. եւ այլն:

Իմաստային տարբեր հանգամանքներով պայմանավորված՝ հավաքական գոյականների որոշ ենթատեսակների զարգացման գործընթացում դիտվում են որոշակի տեղաշարժեր հավաքականությունից դեպի եզակի-հոգնակի հարաբերակցության ոլորտ: Նման տեղաշարժերի են ենթարկվել.

1. Գրաբարյան բայանուն հավաքականները: Գրաբարյան, ինչպես նաեւ ետգրաբարյան բայանուններն ունեին գործողության բազմակիության, տեւականության իմաստ: Ելնելով հենց այդ բառիմաստային առանձնահատկությունից՝ բայանունները դիտվում էին որպես անեզական գոյականներ, իսկ գրաբարյան-ք մասնիկը, ավելանալով բայանուններին, նրանցից կերտում էր հավաքականներ: Այսպիսով, գրաբարում կար վերացական հավաքականների մի խումբ, որ կազմվում էր. ա) բայահիմք + անք կաղապարով, ինչպես՝ տուգանք, աղաչանք, աշխատանք, ամոթանք եւ այլն:

բ) ուն հանգով բայանուն + ք կաղապարով, ինչպես՝ բաժանմունք, զգազմունք, ուսմունք, գբաղմունք եւ այլն:

գ) -եւիք, -ալիք վերջավորվող բայանունները, որ կազմվելով անորոշ դերբայից՝ ի վերջավորությամբ եւ –ք հոգնակերտով, դարձել են անեզական հավաքականներ, ինչպես՝ ուտելիք, ասելիք, հոտոտելիք, շոշափելիք եւ այլն:

Գրաբարյան բայանուն հավաքականները ետգրաբարյան շրջանում աստիճանաբար իմաստափոխվում են, ք վերջաբաղադրիչի հոգնակերտ-հավաքական նշանակությունը, մթագնվում, ապա նաեւ վերանում է: Ժամանակակից հայերենում այս բայանունները գիտակցվում են որպես մեկ՝ եզակի առարկաներ, լրիվ փոխանցվել են եզակի գոյականներին եւ մասնակցում են եզակի-հոգնակի հարացուցային ձեւերի կազմությանը, ինչպես՝ տուգանք-տուգանքներ, աղաչանք-աղաչանքներ, ամոթանք-ամոթանքներ ուտելիք-ուտելիքներ, սաառնալիք-սաառնալիքներ եւ այլն:

2. Հոգնականաձեւ հավաքականները: Հոգնականաձեւ հավաքականների հետագա զարգացումը նրանց տեղաշարժեց դեպի եզակի թիվ, քանի որ հոգնակի բառաձեւը վերաարժեքավորվեց իբրեւ եզակի, որն իր հերթին կարող է մտնել եզակի-հոգնակի հակադրության մեջ: Այս տեղաշարժը հնարավոր դարձավ, երբ գրաբարյան ք հոգնակերտը, վերաիմաստավորվելով, ձեւակազմական միավորից՝ վերջավորությունից, վերածվեց բառակազմականի՝ ածանցի: Այս գործընթացի հետեւանքով –ք հոգնակերտ-հավաքանակերտով կազմված մի շարք գոյականներ գրաբարյան հոգնականաձեւ հավաքականներից փոխանցվեցին ժամանակակից հայերենի եզակիներին՝ մտնելով եզակի-հոգնակի հակադրության ոլորտ: Օրինակ՝ խելք-խելքեր, միտք-մտքեր, մուտք-մուտքեր, ելք-ելքեր եւ այլն:

3. Եզականաձեւ հավաքականներից եզակիին անցումը հատկապես բնորոշ է բանաստեղծական խոսքին: Այսպես՝ եթե գրական հայերենում կիրառելի չեն ամբոխ, բազմություն բառերի հոգնակի ձեւերը, ապա բանաստեղծական խոսքում դրանք ընդունելի կազմություններ են, ինչպես՝ «Նա ամբոխներ էր տեսել հլու եւ բազմությունններ կամակատար (ԵՉ.Հ.,115 էջ), «Ամբոխները խելագարված» (Ե.Չ.) եւ այլն: Եզականաձեւ հավաքականների հոգնակի թվով

կիրառությունը բնորոշ է նաեւ խոսակցական լեզվին: Օրինակ՝ գրական հայերենում անընդունելի խմորեղեններ. բանջարեղեններ. ոսկեղեններ. սպիտակեղեններ. մոգեղեններ եւ նմանատիպ այլ կազմություններ հաճախ են հանդիպում բանավոր խոսքում: Այս դեպքում խոսողը նկատի ունի ոչ միայն տվյալ առարկաների միասնական ամբողջությունը, այլեւ դրանց բազմաքանակությունը, շատությունը, օրինակ՝ «Ես խմորեղեններ եմ պատվիրել», «Նրա ոսկեղենները շատ լավն են», «Բանջարեղենները շուտ են փչանում» եւ այլն:

Այսպիսով, քանի որ ժամանակակից հայերենի հավաքական գոյականների մի ստվար խումբ չունի քերականական տարբերիչ առանձնահատկություններ եւ իմաստային անցումների արդյունքում տեղաշարժվել է եզակի թիվ, ուստի սովորական բառերի նման հոգնակի ձեւեր է կազմում -եր, -ներ հոգնակերտ մասնիկների միջոցով եւ, ի հակակշիռ հավաքական ենթակարգի միաեզրությանը, մտնում է եզակի-հոգնակի հակադրության մեջ:

բ) Անեզական գոյականների թվային իմաստի մասնավորեցումը եզակիի

Անեզական են այն գոյականները, որոնք հիմնականում գործածվում են հոգնակի թվի ձեւով եւ չունեն համապատասխան եզակի թվի ձեւը: Հր. Աճառյանն անեզական գոյականներին տալիս է հետեւյալ բնութագիրը. «Մի խումբ բառեր, որոնք իմաստով եզակի են ու ձեւով հոգնակի, կոչվում են անեզականներ»[1]: Գրաբարում անեզական գոյականները շատ էին. դրանք հատկապես ք վերջնաբաղադրիչով կազմված բառերն էին, ինչպես՝ աչք. միտք. խելք. հոնք. կառք. անառգանք. մեռադրանք. տանջանք եւ այլն: Անեզական էին նաեւ մի շարք հատուկ անուններ, ինչպես՝ Հայք. Ծոպք. Մոկք. Վայք. Ոշտունիք եւ այլն: Ժամանակակից հայերենում այս բառերը (բացի հատուկ անուններից) այլեւս անեզականներ չեն համարվում, այլ եզակի ձեւեր են, որ մասնակցում են եզակի-հոգնակի հարացուցային ձեւերի կազմությանը: Նախկին անեզականների հոգնակին ժամանակակից հայերենում կազմվում է -եր, -ներ հոգնակերտների միջոցով, որ ավելանում են բառահիմքին, ինչպես՝ ելք-ելքեր. մուտք-մուտքեր. մեղադրանք-մեղադրանքներ եւ այլն:

Անեզակիությունը նախ եւ առաջ իմաստաբանական հիմնավորվածություն ունի. այն կապված է առարկաների քանակային հարաբերության յուրովի ընկալման հետ: Գոյականի անեզականության ըմբռնումը կախված է հոգնակի բառածեւի բերած լրացուցիչ բառիմաստի հետ, ուստի թե իր հոգնակածեւ կառուցվածքով, թե՝ գործառույթով բառաքերականական մի ենթակարգ է, որ խիստ բնորոշ էր գրաբարին:

Հին հայերենի անեզական գոյականները ետգրաբարյան շրջանում աստիճանաբար վերաարժեքավորվեցին:

---

[1] Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. III, Ե., 1957, էջ 856:

Գրաբարյան ք մասնիկի հոգնակերֆտ նշանակության մթագնմանը, անկմանը զուգահեռ անեզական կառուցածեւերը գիտակցվեցին որպես եզակի եւ մտան եզակի-հոգնակի նոր հարաբերակցության մեջ: Օրինակ՝ եւք-եւքեր, մուտք-մուտքեր, հանցանք-հանցանքներ եւ այլն:

Կան անեզականներից եզակիին փոխանցված մի շարք գոյականներ, որոնք այսօր էլ հոգնակի ձեւեր չեն կազմում, այսինքն՝ անհոգնակական են, օրինակ՝ խեւք, վառք, կամք եւ այլն:

Անեզականների մեջ տարածված տեղաշարժերը չհասցրեցին բառաքերականական այս ենթակարգի քայքայմանը, ինչի հետեւանքով գրաբարյան անեզականները փոխանցվեցին ժամանակակից հայերենի եզակիին, որոնք ձեռք բերեցին եզակի գոյականներին բնորոշ ձեւաբանական հատկություններ, այն է՝ հոգնակիակազմությունը:

Այսպիսով, գրաբարյան անեզականները ոչ թե վերացել են լեզվից, այլ փոխել իրենց արտահայտության ձեւերն ու եղանակները: Անեզականների ներսում ընթացող տեղաշարժերը սկսվել են դեռեւս հնագույն շրջանում, տարածում գտել միջին գրական հայերենում եւ ավարտվել ժամանակակից հայոց լեզվում: Հր. Աճառյանը գրում է. «Կիլիկյան շրջանում անեզականներն այլեւս ջնջված են եւ ոչ միայն գրաբարի հին անեզական ձեւերը վերածված են եզակիի, այլեւ նորանոր բառեր, որոնք գրաբարում եզակի են, վերածվել են անեզականի, այսինքն՝ ստացել են ք մասնիկը եւ հետո դարձել եզակի»:[1]

Այժմ դիտարկենք, թե գրաբարում որ գոյականներն էին գործածվում անեզաբար եւ ինչպիսի իմաստաքերականական տեղաշարժերի են ենթարկվել դրանք ժամանակակից հայերենում:

1. Գրաբարում անեզական էին երկկազմ կամ բազմակազմ առարկաների անունները, հատկապես այն գոյականները, որոնց հիմքում ընկած էր զույգայնության գաղափարը, ինչպես՝ աչք, ձեռք, ունք եւ այլն: Ժամանակակից հայերենում սրանք փոխանցվել են եզակի ձեւերին, որոնցից, -եր հոգնակերտ մասնիկի հավելումով կազմվում են հոգնակի բառաձեւեր, ինչպես՝ աչք-աչքեր, ձեռք-ձեռքեր, ոտք-ոտքեր, ունք-ունքեր եւ այլն:

Ժողովրդախոսակցական լեզվում մի շարք գոյականներ եզակի գործածությանը զուգահեռ պահպանել են նաեւ անեզականության գաղափարը, հատկապես, երբ գործածվում են երկկազմ կամ բազմակազմ առարկաների իմաստով: Օրինակ՝ «Տեղերը գցել եմ», տեղեր- «անկողին» իմաստով, «Եսեսները պաչեց», եղեսներ- «այտեր» իմաստով եւ այլն:

---

[1] Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. III, Ե., 1957, էջ 874:

2. Գրաբարում անեզականներ էին բազմադեպ երեւույթների, կենցաղային, հոգեկան, ֆիզիկական այլեւայլ երեւույթների անունները, ինչպես՝ հարսանիք, հայեացք, առօք, անէծք, շնորհք, ցնորք, չէնք, անոթանք, տեսք, ցոյք եւ այլ բառեր:

Ժամանակակից հայերենում այս կարգի բառերը հիմնականում համարվում են եզակի ձեւեր եւ մասնակցում են եզակի-հոգնակի հարացուցային շարքերի կազմությանը -եր, -ներ հոգնակերտների միջոցով: Օրինակ՝ հարսանիք-հարսանիքներ, հայացք-հայացքներ, շենք-շենքեր, եւք-եւքեր, անեծք-անեծքներ եւ այլն:

«Անոթանքներ լացուր» (Ռ.Ս.Ց.Ս., 48 էջ), «Փոշի դառնաս բարձունքներում (Ռ.Ս.Ց.Ս., 41):

Գրաբարյան երկինք անեզական գոյականը ժամանակակից հայերենում փոխանցվել է անհոգնականի իմաստաքերականական կարգին, ուստի եզակի-հոգնակի հարաբերակցությանը չի մասնակցում եւ հոգնակիի ձեւեր չի կազմում, թեեւ բանաստեղծական խոսքում հանդիպում ենք երկինքներ բառաձեւի կիրառության դեպքերի, ինչպես՝ «Եթե ուզեն՝ վար կբերեն երկինքներից արեգակներ»(Ե.Չ.Ռ. 45 էջ):

3. Գրաբարյան, ինչպես նաեւ ետգրաբարյան բայանուններն ունեին գործողության բազմակիության, տեւականության իմաստ: Ելնելով հենց այդ՝ բառիմաստային առանձնահատկություններից՝ բայանունները դիտվում էին որպես անեզականներ, իսկ գրաբարյան –ք մասնիկը, ավելանալով բայանունին, նրանից կերտում էր անեզական գոյականներ, ինչպես՝ բերկրանք, աղաչանք, չարչարանք, ուսմունք, մտածմունք, բաժանմունք, կայվածք, լվացք եւ այլն:

Գրաբարյան անեզական բայանուններն արտահայտում էին գործողության, դրության վերացական գաղափար: Այս բառերը ետգրաբարյան շրջանում աստիճանաբար իմաստափոխվեցին, -ք հոգնակերտի նշանակությունը մթագնեց եւ վերացավ, ինչի հետեւանքով ժամանակակից հայերենում ք վերջնաբաղադրիչով անեզական բայանունների մի մասը գիտակցվում է եզակի ձեւեր եւ մասնակցում եզակի-հոգնակի հարացուցային ձեւերի կազմությանը, օրինակ՝ ուսմունք-ուսմունքներ, մտածմունք- մտածմունքներ, կազմվածք-կազմվածքներ եւ այլն:

Այսպիսով, գրաբարյան անեզականները կորցնում են թե իրենց իմաստաբանական հիմքերը, եւ թե քերականական արտահայտության ձեւը: –ք վերջնաբաղադրիչը, իմաստափոխվելով, ժամանակակից հայերենում զրկվում է հոգնակերտի գրաբարյան նշանակությունից եւ ձեռք է բերում ածանցի արժեք, իսկ անեզական բառերը՝ եզակիին բնորոշ ձեւաիմաստային հատկություններ:

Իմաստային փոխանցումների հետեւանքով գրաբարյան անեզակաները ժամանակակից հայերենում անցնում են եզակի ձեւերին՝ դրսեւորելով հետեւյալ առանձնահատկությունները.

1) Անեզական գոյականները ձեռք են բերել եզակի նշանակություն, ինչպես՝ այիք. առիք. կիրք. մեղք. բարձունք. -եր. -ներ հոգնակերտների հավելումով կազմում են հոգնակի ձեւեր:

2) Գրաբարյան մի շարք անեզականներ, որ ունեին նաեւ հազվադեպ գործածվող եզակի ձեւեր, ժամանակակից հայերենում պահպանել են երկու եզրերն էլ, որպես նույնիմաստ բառեր, ինչպես՝ հնաւ-հնաւք:

3) Ժամանակակից հայերենի եզակիին են փոխանցվել գրաբարյան անեզականները թե -ք վերջնադրիչով եւ թե առանց դրա՝ իմաստային տարբերակներով, ինչպես՝ տառիք եւ տառի. ղեմք եւ ղեմ:

4) Անեզականը ժամանակակից հայերենի եզակիին է փոխանցվել առանց –ք հոգնակերտի, ինչպես՝ գրաբարում լանջք. հունձք. նախճիրք. ազուաւք. մինչդեռ ժամանակակից հայերենում՝ լանջ. հունձ. նախճիր. ազուաւ:

5) Կան նաեւ դեպքեր, երբ գրաբարյան անեզականը նույնությամբ փոխանցվել է ժամանակակից հայերենի եզակիին, սակայն փոխվել է նրա բառիմաստը: Օրինակ՝ գրաբարյան ընթաք անեզական բայանունը, որ ուներ «ընթացք, ելք» իմաստը, ժամանակակից հայերենում վերածվել է թանձրացական գոյականի եւ ստացել «փոխադրամիջոցի տեսակ» իմաստը:

«Այսպիսով, անեզականների մեջ տարածված տեղաշարժերը հասցրին բառաքերականական այդ ենթակարգի քայքայմանը, նրանց հիմնականում դարձնելով եզակի»:[1]

Գ) Փոխանցումներ անհոգնականներից եզակի-հոգնակի հարաբերակցության ոլորտ

Անհոգնական են այն բառերը, որոնք չունեն հոգնակի ձեւեր եւ չեզոք են մեկի եւ մեկից ավելիի քերականական հարաբերակցության նկատմամբ: Արդյունքում՝ անհոգնականները չեն մասնակցում եզակի-հոգնակի հարացուցային շարքի կազմությանը: Անհոգնական գոյականները ոչ թե եզակի թիվ են ներկայացնում, այլ եզականաձեւ բառեր են, որոնք հիմնականում քանակական թվականով արտահայտված լրացում չեն ստանում եւ ունենում են եզակի թվով ստորոգյալ: Հայերենում անհոգնականները չունեն կառուցվածքային առանձնահատկություններ եւ բնորոշվում են իմաստային ընդհանրություններով:

Ժամանակակից հայերենի անհոգնական գոյականները կազմում են առանձին խմբեր.

---

[1] Հ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Ե., 1972, էջ 67:

ա) հատուկ անուններ (անձնանուններ, կենդանիների անուններ, տեղանուններ), որոնք, անվանելով առանձին անձ կամ առարկա՝ իրենց ուղղակի կիրառության դեպքում բացառում են հոգնակի թիվը, օրինակ՝ Հայկ, Անահիտ, Անի, Երեւան, Գյումրի, Գամառ եւ այլն,

բ) բնության մեջ եզակի, միակ առարկաների անուններ, որոնց հոգնակին, շատը չի կարող լինել, ինչպես՝ արեւ, լուսին, երկինք, երկիր, հյուսիս, հարավ, արեւելք, արեւմուտք, հասարակած եւ այլն: Այս խմբի մեջ են մտնում տարվա եղանակները, ամսանունները եւ միակի գաղափարը կրող այլ անվանումներ,

գ) ուսմունքների, ուղղությունների, տեսությունների, գիտությունների անվանումներ, որոնք կազմվում են հայերեն –ություն կամ փոխառյալ –իզմ վերջածանցներով, ինչպես՝ մահմեդականություն, լավատեսություն, հոռետեսություն, ֆեոդալիզմ, ուտոպիզմ, ռեալիզմ եւ այլն,

դ) չափվող առարկաների կամ նյութի անուններ, ինչպես՝ նավթ, սոսինձ, ձյուն, թթվածին, արյուն, թուք, ծավալ, ընինձ, ցորեն եւ այլն,

ե) –ում եւ –ություն վերջածանցներով կազմված մի շարք վերացական գոյականներ, ինչպես՝ ծաղում, տապալում, ուսում, մեծություն, ծանրություն, քաղցրություն, կազմություն եւ այլն:

Թեեւ ասացինք, որ անհոգնական գոյականները հիմնականում եզականածեւ բառեր են եւ հոգնակի թիվ չեն կազմում, սակայն լրացուցիչ իմաստավորման դեպքում սրանք եւս կարող են կազմել հոգնակի ձեւեր եւ մտնել եզակի-հոգնակի հարաբերակցության ոլորտ: Այս դեպքում բառը չի դադարում անհոգնական լինելուց, պարզապես լրացուցիչ իմաստի ձեռքբերումը հնարավորություն է տալիս ընդլայնել բառի իմաստաքերականական արժեքը եւ տեղաշարժել այն անհոգնականից եզակի-հոգնակի երկարժեք թվային հարաբերակցության: Այս դեպքում տեղաշարժը մասնակի է, քանի որ բառը, կոնկրետ կիրառություններում ստանալով հոգնակերտ վերջավորություններ, իր բուն նշանակությամբ չի դադարում անհոգնական դիտվելուց:

Ստորեւ ներկայացնենք համապատասխան փաստերն արդեն իսկ կատարած խմբավորումների համար:

ա) Հատուկ անունները, թեեւ անհոգնական գոյականներ են, սակայն կարող են գործածվել հոգնակի թվով, երբ նրանց իմաստային դաշտում տեղի են ունենում որոշակի տեղաշարժեր: Նման տեղաշարժերի դեպքում հոգնակին ցույց է տալիս.

– տարբեր անձեր կամ վայրեր, որոնք նույն անունն ունեն, օրինակ՝ «Մեր կուրսում շատ Հայկեր եւ Անիներ կան», «Հայաստանում Արգավանդները, Սարալանջերն ու Նորաշենները մի քանիսն են»,

– նույն գերդաստանի, ընտանիքի անդամներ, ինչպես՝ «Մելքոնյանները մեր հարեւաններն են», «Ղազանչյանները գաղթել են Ղարսից», Հովհաննես եւ Լեւոն Օրբելիներ եւ այլն,

– տվյալ հատուկ անվանը բնորոշ հատկությունը ստանում է հասարակ անվան նշանակություն, ինչպես՝ «մեր ժողովրդին Դավիթներ միշտ պետք են», «Զիմզիմովներ հիմա էլ են ծնվում» եւ այլն,

բ) թեեւ եզակի, միակ առարկաների անվանումները չունեն հոգնակի թվի ձեւեր, սակայն լրացուցիչ կամ փոխաբերական իմաստավորման դեպքում հոգնակի ձեւերի կազմությունը հնարավոր է դառնում: Օրինակ՝ տարվա կտրվածքով յուրաքանչյուր ամիսը մեկն է, սակայն եթե վերցնենք ավելի մեծ ժամանակահատված, ասենք՝ հինգ տարի, ամսանունը կարող է գործածվել եւ հոգնակի թվով, ինչպես՝ «Հունվարները ավելի ցրտաշունչ են լինում, քան փետրվարները», նույն կերպ՝ «Ես երկուշաբթիները չեմ սիրում» եւ այլն: Եզակի, միակ առարկաների հոգնակի կիրառությունը տարածված է պոեզիայում, քանի որ այստեղ դրանք ստանում են մի շարք լրացուցիչ իմաստներ. «Մայր իմ, արեւները կուզեմ քեզ տալ» (ՀՇ, Ե.4, 17 էջ). «Մորս ոտքի տակ ձաղումները փռեք» (Հ.Շ.Ե., 4, 42 էջ), «Դու աշխարհները կպահես քո արեւի պաշարով» (ՀՇ. Ե. 4, 62 էջ) եւ այլն:

գ) Անհոգնական գոյականներից ուսմունքների, ուղղությունների, տեսությունների, գիտությունների անվանումները հոգնակիակերտ մասնիկներ չեն ստանում եւ լրացուցիչ իմաստավորմամբ չեն գործածվում:

դ) Անհաշվելի առարկաների, նյութի անունները նույնպես սովորաբար մեկի եւ մեկից ավելիի թվային հակադրության մեջ չեն առնվում, քանի որ քանակային հարաբերության առումով անբաժանելի են, չթվարկվող: Սակայն հաճախ այս գոյականների բառահիմաստային լրացուցիչ երանգավորումները հնարավոր են դարձնում անհոգնականի հոգնակի գործածությունը: Օր.՝ Ձյուն բառը անհոգնական է, քանի ու նյութականություն- զանգվածայնություն է արտահայտում, սակայն փոխաբերական իմաստով գործածվելիս կարող է ստանալ -եր հոգնակերտը, ինչպես՝ «թափված ձյուներ եւ ծաղիկներ Ձյունի մոտ» (Հ.Ս. Ց.Ս.Բ., 16 էջ): Նույն կերպ՝ «Մութին սառեռն հալեցաս» (ԴՎ. Բ. էջ 118), «Ոսկեհատիկ գարիներու կույտին վրա» (ԴՎ. Բ. 170 էջ) եւ այլն:

ե) Վերացականություն արտահայտող գոյականները, որ նշում են հոգեկան եւ ֆիզիկական երեւույթներ, իրենց բուն նշանակությամբ անհոգնական են, քանի որ ընկալվում են իբրեւ անբաժանելի ամբողջություն, ինչպես՝ սեր, խանդ, թախիծ, փառք, զայրույթ, երջանկություն, զգվանք, կարոտ, աղմուկ, տխրություն եւ այլն: Սակայն իմաստային որոշ ընդգրկումների դեպքում սրանք կարող են գործածվել նաեւ հոգնակի թվով: Օրինակ՝ Սեր բառը, որպես, հոգեկան երեւույթ, զգացմունք ցույց տվող գոյական, անհոգ-

նական է, քանի որ անբաժան միասնություն ունի, սակայն կարող է դրվել հոգնակի թվով՝ սերեր. ցույց տալով այդ զգացմունքի մասնավոր դրսեւորումները: Նույն կերպ՝ մահ անեզական գոյականը մահեր հոգնակի ձեւում արտահայտում է բառի լրացուցիչ երանգավորում՝ «մահվան կոնկրետ դրսեւորումներ», օրինակ՝ «Եվ լուսնի վրա մահեր նշմարեց» (ՀՇ. հ. 2, 10 էջ): «Եվ զաւրութիւններդ ազնիվ» (ՀՍ. Տ.Կ. 136), «Կարոտներիս գագաթն է այն» (ԵՉ. Հ. 298 էջ) :

զ) Անհոգնական են նաեւ բնության որոշ երեւույթներ նշող վերացական գոյականները, ինչպես՝ շոգ, ցուրտ, անձրեւ, ձյուն, սառնամանիք եւ այլն: Սակայն, երբ կենդանի խոսքի ընթացքում նշվում է տվյալ երեւույթի բազմադեպությունը, այս գոյականները գործածվում են նաեւ հոգնակի թվով, օրինակ՝ «Ցոտեղն ընկել են», «Սառնամանիքներն անցան», «Շոգերն անտանելի են դարձել» եւ այլն:

Ընդհանրապես, ժամանակակից գրական հայերենում վերացական անհոգնականները համեմատաբար ավելի քիչ են, քանի որ վերացական գոյականների մեծ մասը իմաստային տեղաշարժերի հետեւանքով կարող են կազմել հոգնակի թվի ձեւեր: Օրինակ՝ «Հրթիռ-հրթիռ վեր են թռչում կյանքերը մեր կարեվեր» (ԵՉ. Հ., 34 էջ), «Լցված է անհուն իմ հոգին հիմա Շփոթ երգերով ու աղմուկներով» (Ե.Չ., Հ., 212 էջ), «Քնքշությունները դարձան երազ» (ՎՏ.Բ, 251 էջ) :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե. Ե., 1962թ.
2. Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Ե. 1957թ.
3. Էդվարդ Աղայան, Լեզվաբանության ներածություն, Ե., 1973թ.
4. Հ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Ե., 1972թ.

ՀԱՍՍՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հ.Շ.Ե. – Հովհաննես Շիրազ, Երկեր, IV
2. Ե.Գ.Հ. - Եղիշե Չարենց, Հատընտիր
3. Հ.Ս.Բ. – Համո Սահյան, Բանաստեղծություններ
4. Դ.Վ.Բ. - Դանիել Վարուժան, Բանաստեղծություններ